

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԿԵԾՆ
ՈՒՒՍԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1915-1917թթ.)
ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Ցանկացած պետության քաղաքականության վրա որոշակի ազդեցություն է ունենում տվյալ պետության հասարակայնության դիրքորոշումը կոնկրետ հարցերի շուրջ: Բացառություն չէր նաև Ռուսաստանը, որի քաղաքականության վրա, մասնավորապես Հայոց ցեղասպանության ու Հայկական հարցում, իր կնիքն էր թողնում այդ երկրի պարբերական մամուլը:

Ռուսաստանում Հայկական հարցի շուրջ բանավեճն այնքան էր ծավալվել, որ այն աստիճանաբար դուրս էր եկել միջգերատեսչական ոլորտից և տեղափոխվել մամուլի էջերին: Այսպես, ոմն մագիստրանտ «Кавказское слово» քերթում տպագրել էր մի հոդված, որտեղ հայերին առաջարկում էր հրաժարվել Արևմտյան Հայաստանի ինքնավարությունից, քանի որ Ռուսաստանն այդ տարածքը համարում է կայսրության մի մասը:¹ Պետք է նշել, որ այս հոդվածը եզակի չէր, նմանատիպ հոդվածներ անընդհատ տպագրում էին ռուսական որոշ հետադեմ պարբերականներ («Русское знамя», «Земщина», «Петроградские ведомости» և այլն): Կարելի է ենթադրել, որ այս պարբերականները հանձնարարական էին ստացել մեծապետական հոսանքի ներկայացուցիչներից՝ հակաքարոզչություն սկսել Արևմտյան Հայաստանի ինքնավարության դեմ և խաղալով հասարակության որոշ մասի մեծապետական և ազգայնամոլական զգացմունքների վրա, փորձել հակառակ հասարակական կարծիք ստեղծել այդ հարցում: Նման հոդվածներին պետք էր պատասխանել, ուստի այս գործն իրենց վրա վերցրեցին ռուսալեզու երկու՝ «Армянский вестник» և «Армяне и война» հայ պարբերականները:

Ռուսական հետադիմական մամուլում ակտիվ քննարկման առարկա էր դարձել նաև հայերի վերաբերմունքի հարցը Ռուսաստանի և ռուսական իշխանության հանդեպ: Այս հարցը քննարկվում էր բացահայտ հակահայկական կողմնորոշմամբ. նշվում էր, որ հայերը դժգոհ են ռուսական իշխանությունից, ցանկանում են ազատվել դրանից և այս ենթատեքստում մեկնաբանություն էր արվում, որ հայերն անջատողականներ են, և Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը դրա դրսևորումներից մեկն է, որին պետք է հետևեր նաև Արևելյան Հայաստանի ինքնավարության

պահանջը: Արդյունքում, ըստ ռուսական հետադեմ մամուլի, հայերը նպատակ ունեն կայսրության մի մասը անջատել Ռուսաստանից, թուլացնել վերջինիս և ստեղծել իրենց պետությունը, հետևելով Բուլղարիայի օրինակին: Այս անհավասար քարոզչական պայքարում հայանպաստ քարոզչությանը զբաղվում էր հիմնականում «Армянская вестник»-ը, որը փորձում էր հերքել այս անհիմն մեղադրանքները և ապացուցել, որ հայերը միշտ եղել են ու կլինեն հավատարիմ Ռուսաստանին, իսկ Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը թխում է նաև Ռուսաստանի շահերից: Այս պատվիրված հոդվածներն ու հրապարակումները, սակայն, մեծամասնություն չէին կազմում. ռուսական պարբերական մամուլը մեծ մասամբ օրյեկտիվ գնահատականներ էր տալիս Հայոց ցեղասպանությանը: Մասնավորապես՝ ռուսական մամուլում մեծ տեղ էր հատկացվում արևմտահայերի կոտորածի տարեգրությանը և ակամատեսների վկայություններին:

Ինչպես հայտնի է, 1915թ. ապրիլի 8-ին սկսվեց գեյթունցիների տեղահանությունը: Առաջին քարավանը, թվով 8000 մարդ, ուղարկվեց Սուլթանիե կոչվող վայրը՝ Անկարայից ոչ հեռու, իսկ երկրորդը՝ Միջագետքի Տեր-Ջոր անապատը:²

Ապրիլի 24-ին բանտարկվեցին Կ. Պոլսի հայտնի 225 հայ գործիչներ, իրր թե կապված Վանի դեպքերի հետ: «Բանտարկվածների թվում էին, - գրում է «Кавказское слово» թերթը, - Միամանթոն և Վարուժանը, «Բյուզանդիոն» հանդեսի խմբագիր Ն. Կեչյանը, գրողներ Երվանդ Օտյանը, Ռուբենը, Ջարդարյանը, Գավրոշը, Շահբազը, Թորքիայի փոստի մախկին մախաբար Վ. Մարտիրոսյանը, բժիշկներ Թորգոմյանը, Թազվորյանը, Փաշայանը, մախկին պատգամավոր և հայտնի կամավոր Մուրադը, հայտնի դատապաշտպան Ջոհրապը և ուրիշներ: Բանտարկվածներին ուղարկեցին Կոնիա՝ հաշվեհարդարի»:³ Ահա մեկ այլ հրապարակում՝ գրող Ջաբել Եսայանի մասին: 1915թ. ապրիլի 24-ին գրող Ջաբել Եսայանը, չի ձերբակալվում. շատ պատահականորեն այդ օրը նա գտնվում էր այլ վայրում: Իմանալով հայ մտավորականների ձերբակալման մասին, նա դա համարում է պատահական երևույթ: Որոշակի ժամանակ պետք եղավ, որ Ջաբել Եսայանն իմանար մանրամասներ հայ մտավորականների ոչնչացման մասին: Նա, անցնելով ընդհատակ, Բուլղարիայի և Ռումինիայի տարածքով գաղտնի հասնում է Կովկաս:⁴

1915թ. օգոստոսին վերջնականապես իրականացվեց արևմտահայ մտավորականության ոչնչացումը Այաշում: Բանտարկվածների նկատմամբ կիրառվում էին հոգեբանական ազդեցության այնպիսի մեթոդներ, ինչպիսիք էին ցուցադրական մահապատիժները (կախաղանների միջոցով), թերթեր կարդալու արգելքը (միայն մեկ անգամ բանտարկյալներին թույլ էր տրվել թերթ կարդալ, որը պարունակում էր Կ. Պոլսում պետական դավաճանության մեղադրանքով 21 հայերի մահապատժի ենթարկելու նկարագրությունները) և այլն:⁵ 1915 հուլիսի սկզբին «Кавказ» թերթն արձանագրեց Մարաշի սանջակի հայերի կոտորածը, հաղորդեց զանգվածային կոտորածի մասին Բիթլիսի և Սվազի վիլայեթներում: Հայերի կոտորածների հարցը բարձրացրեց նաև Զիվիլեզովը «Русские Ведомости» թերթի օգոստոսի 4-ի համարում:

«Новое время» թերթում տեղ էր գտել փետրվարի 24-ին Էրզրումից ստացված՝ ամերիկացի մի բժշկուհու նամակը, ուր նկարագրում էր Էրզրումում տեղի ունեցած վերջին իրադարձությունները, կապված քաղաքի հայ

ազգաբնակչության զանգվածային կոտորածի և տեղահանության հետ: Ականատեսի վկայությամբ էրզրումում կոտորածները ծայրահեղ մեծ չափերի չհասան միայն այն պատճառով, որ թուրքերը վախենում էին թուրք բնակչության նկատմամբ ռուսական զորքերի վրեժխնդրությունից, ընդ որում, թուրքերը երբեք չէին կասկածում, որ ռուսները գրավելու են էրզրումը: Նամակն ավարտվում է այն մտքով, որ ռուսական դրոշը վերջապես ծածանվեց մի երկրում, որն իր նախկին կառավարման ձևով ապագայում մեկընդմիջտ կորցրել էր ինքնուրույն գոյության իրավունքը:⁶

Մեկ այլ՝ «Нижнегородских листок» թերթը «Պատահական գրառումներ» հոդվածում նշում է, որ ռուս հասարակությունը քիչ քան գիտի Հայաստանի, հայերի և այդ ժողովրդի հետ կատարված ողբերգության մասին: Հակիրճ ներկայացնելով հայ ժողովրդի մշակույթն ու պատմությունը, թերթը նշում է, որ տվյալ պահի դրությամբ արդեն կոտորվել է 800000 հայ, որ թուրքական կառավարությունը մեղադրվում է եթե ոչ այդ ջարդերը կազմակերպելու, ապա, առնվազն, դրանք թույլ տալու մեջ: «Անկասկած այդ ջարդերին մասնակցել են տեղական իշխանությունները, նույնիսկ մահաճապետները, որոնք ոչ մի պատիժ չեն կրել»⁷, - նշվում է հոդվածում:

«Петроградские ведомости» թերթի լրագրողը, որը զնդերից մեկի հետ մասնակցել էր Արևմտյան Հայաստանում ընթացող մարտական գործողություններին, գրում է. «Գունդը արագ քայլքով Արևմտյան Հայաստանում արդեն անցել է 30 վերստ, սակայն չհանդիպեցինք ոչ մի տեղացի բնակչի՝ ոչ հայ տղամարդու, ոչ հայուհու և ոչ էլ երեխայի: Մի քանի գյուղեր անցանք՝ դրանք քաղաքակապես դատարկ էին: Ասում են, որ մինչև պատերազմն այստեղ ապրում էին տասնյակ հազարավոր հայեր: Սակայն անհասկանալի է թե ուր են նրանք անհետացել: Մի ամայացած գյուղում զինվորները տեսան 11 տղամարդու հոշոտված դիակներ. պարզվեց, որ դրանք հայ կամավորներ են, որոնք հավանաբար հետախույզներ էին եղել և գերի էին ընկել թուրքերի մոտ»:⁸ Լրագրողն անշուշտ լավ գիտի, թե ինչ է կատարվել հայկական գյուղերի քաղաքահազար բնակչության հետ, սակայն նա իր հետտորական հարցադրումով ստիպում է ընթերցողին նույնպես մտածել իրենց պատմական հայրենիքից մեծ թվով հայերի անհետացման հիմնախնդրի շուրջ:

1915թ. մայիսի 3-ին Կարսի մարզից վերադառնում է Հայկական կենտրոնական կոմիտեի նախագահ Ս. Ս. Հարությունյանը: «Кавказское Слово» թերթում տպագրվում է նրա հարցազրույցը, ուր ներկայացվում է ականատեսների վկայությունները թուրքական վարչապետությունների մասին: Այդ վկայությունները հավաստում էին, որ հայերի ոչնչացման առաջնահերթ նպատակներից մեկը Ռուսաստանի կողմից գրավված տարածքներից փախած թուրքերի ու քրդերի բնակեցումն էր հայկական բնակավայրերում՝ գերազանցապես Վանի վիլայեթում: Հարությունյանը գտնում էր, որ այդ արյունահեղությանը կարող է վերջ դնել միայն ռուսական քանակի վերադարձը, որի հայտնվելուն սպասում են բոլոր հայերը:⁹

Այսպիսով Հարությունյանը բերում է նաև հայկական տարածքները փախստական թուրքերով ու քրդերով բնակեցնելու գործոնը՝ որպես հայերի զանգվածային կոտորածների ժամանակ երիտթուրքերի կառավարության գործելակերպի շարժառիթներից մեկը:

Ռուսական մամուլն իր էջերում քաղաքիվ հոդվածներ է տպագրել, ուր բերվում են Արևմտյան Հայաստանում հայերի կոտորածների մասին ականատեսների վկայությունները: Մասնավորապես՝ «Денъ» թերթը 1915թ.

սեպտեմբերի 6-ին տպագրում է մի հոդված, ուր բերվում են հայերի կոտորածների մասին թուրք բժշկի օրագրից ընդարձակ հատվածներ: «Արևմտյան Հայաստանում Հայիլ բեյի բանակի անհաջող գրոհից հետո, - ասվում է հոդվածում, - որը, հավանաբար, կազմակերպված էր գերմանական «կարճ հարվածների» (այսինքն՝ անակնկալ հարձակումների) համակարգով, ռուսական զորքերը, որոնք շարժվում են նահանջող թուրքերից հետո, հանդիպում են վիրավոր և հիվանդ ասկյարների, որոնց թվում էր մի թուրք բժիշկ, որի մոտ գտնվեց օրագիր, որտեղ նա գրել էր իր զումարտակի «մարտական ուրու» պատմությունը՝ Միրիայից (Հալեպից) մինչև Բիթլիս: Օրագրում կային տեղեկություններ, որոնք ունեին ռազմական կարևոր նշանակություն-և հրապարակման ենթակա չէին, սակայն գրառումների մեջ նկարագրված էին հայերի զանգվածային կոտորածները, որոնք հետևանք էին Կ. Պոլսից եկած հրամանների: Այդ անակնկալ հարձակումները ծայրահեղ մահաբեր եղան հայ ժողովրդի համար, քանի որ դրանք նպատակ ունեին ոչնչացնել այդ ժողովրդին»:¹⁰ Հոդվածն ավարտվում է կոչով հայ գաղթականներին՝ վերադառնալ հայրենիք, քանզի ռուսական զորքը կրկին ազատագրել է այն:

1916թ. սկզբին «Южнѣйшѣ Телеграфъ» քերթում տպագրվում է Մուշից փախած հայ հոգևորական Եղիշե Պարսամյանի պատմածը թուրքերի կատարած զազանությունների մասին: Հոգևորականը վկայում է, որ իր աչքերի առաջ մորթեցին Մուշ քաղաքի 13000 բնակիչներին, նրանց մեղադրելով ապստամբություն կազմակերպելու և ռուսների օգտին լրտեսություն կատարելու մեջ: Լուրերն այն մասին, եզրակացնում է հոդվածագիրը, որ թուրքերը տեղահանում են հայ ազգաբնակչությանը պատերազմական իրադրության թելադրանքով՝ լոկ մարտական գործողությունների թատերաբեմից՝ կեղծ են, քանի որ հոգևորականն ականատես է եղել Մուշի շրջանի ավելի քան հարյուր հազար հայերի տեղահանությանը և կոտորածին, որը մարտական գործողություններից բավականին հեռու էր:¹¹

Ռուսական մամուլի ուշադրության կենտրոնում շարունակում էր մնալ հայ գաղթականությանն առնչվող հիմնախնդիրները և սա բնական է, քանի որ հայ գաղթականությանն աջակցելու ձեռնարկումները կատարվում էին անմիջապես ռուս հանրության աչքի առաջ:

«Թուրքերի տխրահռչակ հարձակումը Մարիդամիշի և Արդահանի ուղղությամբ, որն ավարտվեց նրանց լիակատար ջախջախումով, խառնաշփոթ առաջացրեց ոչ միայն սահմանամերձ շրջանների խաղաղ բնակչության, այլև բուն Թուրքիայի բնակչության շրջանում: Թուրքիայի «քաղաքացիները», սպասելով թուրքական բանակի նոր հարձակում և վախենալով նրանց կողմից հնարավոր ջարդերից ու կոտորածներից, հազարներով անցնում են Ռուսաստան: Իզդիրը և նրա շրջակայքը լցված են գաղթականներով: Այստեղ արդեն կուտակվել է մի քանի տասնյակ հազար մարդ, սակայն ավիթը չի դադարում, գալիս են նորանոր զանգվածներ»¹², - գրում է «Кавказское слово» քերթի թղթակիցը Իզդիրից:

Գաղթի այս քեման շարունակում է «Кавказ» քերթը. «Մարսափելի դատարկության պատկերներ կարելի է տեսնել Խոսրով գյուղում, որտեղ տեղակայվել էր մեր լրագրողական խմբից մեկը: Պատկերացրեք մի ահռելի բնակատեղի, որն ունի ավելի քան 500 տուն, բացարձակապես դատարկված, և միայն լսվում են տարբեր տեղերում անտեր թողնված անասունների ձայները: Եվ որպես այս սարսափի շարունակություն՝ կարեն-

լի է տեսնել ամբողջ բնակչությունից մնացած միայն չորս ծեր կանանց լացն ու արոթքը: Նրանք ծնկաչոք խնդրում էին փրկել իրենց»:¹³

1915թ. օգոստոսին «Кавказ» թերթը հաղորդում է, որ Էջմիածնից դեպի թուրքական սահմանը տանող ամբողջ ճանապարհը լցված է գաղթականներով, նրանք գրադեցրել են Էջմածինը և Իգդիրը՝ նրա շրջակայքով: Թերթը նշում է, որ Իգդիրում կուտակվել է 20000 մարդ, իսկ Էջմիածնում նրանց թիվը հասնում է 45000-ի, Վանի վիլայեթից սպասվում է մոտ 200000 գաղթականի հոսք, իսկ Մանազկերտից՝ մինչև 60000 մարդ: Նշվում է նաև, որ գաղթականների տեղակայման վայրերում հսկայական աշխատանք է կատարվում՝ Էջմիածնում բացվել է հիվանդանոց, բաղնիք և որբանոց, գաղթականների ճանապարհին տեղադրված են սննդի և քժկական կետեր:¹⁴

Ըստ «Русское слово» թերթի 1915թ. հուլիսի 29-ի համարում գետեղված՝ եպիսկոպոս Բագրատի հաղորդման՝ գաղթականներին օգնելու համար 1915թ. դեկտեմբեր ամսից ստացվել է 600000 ռուբլի, որից ծախսվել է 400000-ը: Մնացած գումարը, նշվում է հոդվածում, քավարար չէ գաղթականների կարիքները հոգալու համար, քանի որ նրանց հատկացվում է մինչև 800 փութ հաց օրեկան, չհաշված այլ սննդամթերքները: Ընդգծվում է, որ կառավարությունն անվճար հատկացնում է երթուղային տոմսեր գաղթականներին, տեղական իշխանություններին հրահանգ է տրված օժանդակել գաղթականների տեղաբաշխման աշխատանքներին: Պետական Դոմայի պատգամավոր Պապաջանովը հեռագրում է, որ երբ Պետական Դոման գումարներ հատկացնի Ռուսաստանի գաղթականների համար, գումարներ կհատկացվեն նաև հայ գաղթականներին:¹⁵

1915թ. օգոստոսի 12-ին տեղի ունեցավ Ռուսաստանի քաղաքների միության Կովկասյան բաժնի և գրեթե բոլոր հասարակական կազմակերպությունների համատեղ նիստը, որը նվիրված էր գաղթականների օգնության հիմնահարցին: Հատուկ ուշադրություն դարձվեց գաղթականների շրջանում համաճարակների տարածման խնդրին: Կազմվեց նախահաշիվ, համաձայն որի յուրաքանչյուր գաղթականի համար օրեկան նախատեսվեց 25 կոպեկ: Եթե հաշվի առնենք, որ այդ պահի դրությամբ Կովկասում արդեն հաշվվում էր 150000 գաղթական, ապա ընդհանուր գումարը կազմելու էր ամսեկան 1125000 ռուբլի: Խորհրդակցությունը որոշեց, որ պետք է գործադրվեն բոլոր միջոցները, որ գումարներն անհապաղ հատկացվեն և ժամանակին սկսվեն կատարվել գաղթականներին համակողմանի օգնություն ցույց տալու աշխատանքները:¹⁶

«Армянский вестник» թերթն իր 1916թ. N 4 համարում հայտնում էր, որ «Речь» թերթի խմբագրությունն իր գրասենյակում կազմակերպում է նվիրատվությունների ընդունում, որպեսզի, ինչպես նշում է թերթը, - «իր ուսերին պատերազմի այդքան դաժանություններ կրած հայ ժողովրդի կենդանի մնացած հատվածին հնարավորություն տրվի ինչ-որ կերպ կարգավորելու իր ճակատագիրը»:¹⁷

Հրայր Չալխուշյանը 1915թ. հունվարի 2-ին մամակով դիմում է Մոսկվայի քաղաքապետ Մ. Վ. Չելնոկովին, որը նրա դասընկերն էր, ներկայացնելով արևմտահայերի ծանր, ողբերգական վիճակը: Նա նշում էր, որ հայ ժողովուրդն այս ճակատագրական պահին օգնության կարիք ունի և այդ օգնության նախաձեռնող կարող էր հանդիսանալ Մոսկվայի Դոման: Չելնոկովի բացակայության պատճառով մամակին պատասխանում է Մոսկվայի Դոմայի խոսնակ Ն. Վ. Տեսլենկոն, որը համաձայնվում է

Չալխուշյանի կողմից առաջ քաշված խնդիրների դրվածքի հետ և խոստանում օգնել: 1915թ. հունվարի 13-ին Մոսկվայի Դոման որոշում է ընդունում Կովկասի փախստականներին համակողմանիորեն օժանդակելու մասին: Չալխուշյանի դերն այս գործում լուսաբանել է «Привозовский край» քերթը, որն իր էջերում տպագրել է նրա մամակագրությունը, որը հետագայում արտատպվեց նաև Կովկասի ռուսական մամուլի էջերում:¹⁸ Ցավոք, այս որոշումն ընդհանուր էր և չէր վերաբերվում միայն հայերին:

1915թ. փետրվարին Պետական Դոմայում իր ունեցած ելույթում Պ. Միլյուկովն ընդգծում էր, որ Ռուսաստանի քաղաքականությունը ժամանակ առ ժամանակ փոխվում է, սակայն հայերի վերաբերմունքը դեպի Ռուսաստանը մնում է անփոփոխ: Ելնելով դրանից, Միլյուկովը գտնում էր, որ հայերին անհրաժեշտ է ցուցաբերել պետական օգնություն՝ անհրժեշտ է ի կատար ածել հայերին օգնելու նպատակով գումարներ հատկացնելու Պետական Դոմայի որոշումը:¹⁹

1915թ. փետրվարի 9-ին «Каспий» քերթը հայտարարեց Թուրքիայից և Պարսկաստանից գաղթած հայ փախստականներին տեղաբաշխման մասին Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառում: Հայկական վեց գյուղերում տեղավորվեց 1394 գաղթական: Ամեն օր ժամը 16-ին գաղթականներին տրվում էր մեկ հոգում 2 ֆունտ (մոտ 800 գրամ) հաց:²⁰ Ռուս հասարակությունը 1915թ. մարտի 7-9-ը Պետրոգրադում կազմակերպեց «Հայկական օրեր»: «Петроградский Курьер» քերթն անդրադարձավ այդ իրադարձությանը, որը, քերթի կարծիքով, ուներ ոչ միայն մշակութային, այլև քաղաքական նշանակություն: Ստեղծվեց հայերին օգնություն ցույց տալու հասարակական գործիչների կոմիտե՝ կոմս Մ. Ի. Տոլստոյի գլխավորությամբ, որը հավաքեց 80000 ռուբլու չափով նվիրատվություն: «Русские Ведомости» քերթի Իզդիդի քրթակիցը հայտնում է, որ դրան զուգահեռ 66000 ռուբլու հանգանակություն է հավաքել նաև տեղի հայությունը: 1915թ. դեկտեմբերի վերջին Ռուսաստանի քաղաքների միության կոմիտեն Կովկասում փախստականների գործերով գլխավոր լիազոր, զեներալ Թամամշևին ներկայացրեց Թուրքիայից գաղթածներին օգնելու նպատակով ծախսված 880 հազար ռուբլու հաշվետվություն: Գեներալ Թամամշևը հաջորդ տարի նախատեսում էր ծախսել 1,9 մլն. ռուբլի՝ գաղթականներին օգնելու նպատակով:²¹ Ընդամենը Կովկասում կար 164000 գաղթական՝ Երևանի նահանգում 100716, Ելիզավետպոլի՝ 11840, Թիֆլիսի՝ 7660 (Թիֆլիս քաղաքում՝ 1360), Կարսի մարզում՝ 11000, Բաքվի նահանգում՝ 900, Ալաշկերտի դաշտում՝ 12000:²²

«Закавказская Речь» քերթի 1915թ. դեկտեմբերի 24-ի համարում լույս տեսավ հետաքրքիր մի հոդված: Հոդվածագիրը անդրադառնում էր այն խնդրին, որ Փարիզում մի շարք նշանավոր հայ քաղաքական, գրական և համալսարանական գործիչներ դիմել են ֆրանսիական ժողովրդին Կովկաս փախած գաղթականներին օգնություն ցույց տալու խնդրանքով:²³ Հեղինակը քացասաբար է վերաբերվում այդ փաստին և քերտում է մի շարք հիմնավորումներ: Նա գրում է, որ դրական կվերաբերվեր, եթե Ֆրանսիան նյութական օժանդակություն ցուցաբերեր Թուրքիայում մնացած դժբախտ հայերին, ինչը որոշակիորեն կթեթևացներ նրանց վիճակը, քույլ կտար, գոնե, փրկագնել հարազատներին, սակայն, հեղինակի կարծիքով, Կովկասում գտնվող գաղթականներն օգնության կարիք չունեն, քանի որ նրանց օգնություն են ցույց տալիս ինչպես ռուսական իշխանությունները, այնպես

էլ արևելահայերը: Կարելի է ենթադրել, որ հեղինակը մտավախություն ունի, որ այդ դեպքում Կովկասում գտնվող զաղթականների շրջանում կուժեղանա Ֆրանսիական ազդեցությունը: Հոդվածագիրը նշում է, որ երկու ռուսական մայրաքաղաքները՝ Մոսկվան և Պետրոգրադը տրամադրել են յուրաքանչյուրը 100000-ական ռուբլի, կազմակերպվել են հանգանակություններ, ընդհանուր առմամբ մինչև 1915թ. վերջը 1916թ. սկիզբը տրամադրվել է 5922000 ռուբլի, որը դրվել է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի տրամադրության տակ, իսկ վերջին 500000 ռուբլին ծախսվել է կովկասյան այլ ժողովուրդներին օգնություն ցուցաբերելու համար:²⁴ Հեղինակն անտակաություն է համարում պատգամավորներ Պապաջանովի և Աճեմովի կողմից հայերին 500000 ռուբլի տրամադրելու պնդումը, երբ նրանք պահանջում էին, որ այս գումարը տրամադրվի հայկական կազմակերպություններին և ոչ թե Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին:²⁵ Հեղինակն, ակնհայտորեն, ցույց է տալիս, որ դժգոհ է հայ պատգամավորների գործողություններից, սակայն նրանց կատարած քայլն ընդամենը նպատակ է ունեցել հայերին հատկացնել լրացուցիչ 500000 ռուբլի, քանի որ վերջին 500000 ռուբլին, ինչպես նշում է հեղինակը, ծախսվել էր ոչ հայերի համար: Կարծում ենք՝ պատգամավորներն իրոք այլևս չպետք է վստահեին Վորոնցով-Դաշկովին, քանի որ հայերի համար հատկացված գումարները փորձում էր ծախսել այլ նպատակներով: Բացի այդ՝ Վորոնցով-Դաշկովը նպատակ չուներ, ընդհանրապես որևէ գումար ծախսել հայերին Արևմտյան Հայաստան վերադարձնելու համար, այնինչ հայկական կազմակերպությունները հենց այդ նպատակն էին հետապնդում: Ուստի Վորոնցով-Դաշկովի կողմից ծախսված գումարները հայ պատգամավորները համարում էին ոչ նպատակային, և շատ բնական է, որ այս պարագայում հայերը օգնության խնդրանքով դիմել էին նաև Ֆրանսիային, ինչը դիվանագիտական ճնշման մի ձև էր՝ Ռուսաստանից լրացուցիչ 500000 ռուբլի ստանալու նպատակով:²⁶

“Кавказское Слово” թերթը հանգամանորեն անդրադարձել է նաև Վանի ազատագրման հարցին: Ներկայացնելով ռուսական բանակի ունեցած դժվարությունները, թերթը գրում է, որ 1915թ. մայիսի 6-ին հայ կամավորները մտան Վան, իսկ մայիսի 7-ին՝ Ոստան: Մեկ ամսվա հարձակման արդյունքում ազատագրվեց Վանի վիլայեթը, Մուշի սանջակի մի մասը և Վանա լճի հյուսիսային հատվածը: Թերթը նշում է, որ պաշարման ժամանակ հայերը կորցրեցին 30 մարդ և վիրավորվեց 200 մարդ, իսկ ռուսական բանակի առաջխաղացումը փրկեց 250 հազար հայերի կյանք:²⁷

Վանի ազատագրումից հետո Թուրքիայի կառավարող շրջանները տագնապի մեջ էին: Ռուսական զորքերի առջև բացվում էր ճանապարհը դեպի Դիարբեքիր, Մուշ և Բիթլիս: Թուրքական կառավարող շրջանների մտահոգություններն այս առիթով արտահայտեց Ջեվդեթ-բեյը՝ «Ռուս զինվորի զնդակը խփում է մեր ոտքին, այն դեպքում, երբ հայի զնդակը խփում է ուղիղ մեր սրտին»:²⁸ Այսուհանդերձ, ինչպես հայտնի է, 1915թ. հուլիսի սկզբին, ժամանակավոր դադարից հետո, թուրքերն անցան հակահարձակման, գրավեցին Մանազկերտը և Վանը: Միայն հուլիսի 2-ին ռուսական զորքերը սկսեցին կասեցնել թուրքերի գրոհը: Արդյունքում՝ Վանի վիլայեթից առաջացավ զաղթականների նոր ալիք (25000 հոգի) դեպի Պարսկաստան և Ռուսաստան: Եռօրյա ժամկետով Վան վերադարձավ Վանի նախկին նահանգապետ Ջեվդեթ-բեյը: Քաղաքում մնացած բոլոր հայերը կո-

տորվեցին: Ավիրվեցին բոլոր այն կառույցները, որոնք կապ ունեին հայ բնակչության հետ՝ «Ժողովրդական տունը», Վոսմյանի ջանքերով կառուցված Նորաշենի եկեղեցին, Վանի մահաճապետ Արամ Մանուկյանի տունը, քալանված էին մեծահարուստ վանեցիների տները: Վանը կրկին ազատագրելուց հետո, Արամ Մանուկյանի վերադարձած վարչակազմը ստիպված էր սանիտարական աշխատանքներ կատարել, քանի որ քաղաքում և նրա շրջակայքում քափված էին հազարավոր դիակներ:²⁹

Հարկ է նշել, որ դաշնակիցները, մանավանդ՝ Գերմանիան, ամրապնդում էին երիտթուրքերի ինքնավստահությունը: «Թուրքերը հույս ունեն, - գրում է «Кавказское Слово» թերթի մեկնաբանը, - որ որքան էլ Ռուսաստանն առաջ շարժվի, անգամ եթե հասնի մինչև Միջերկրական ծով, միևնույն է Գերմանիան, ճիշտ այնպես, ինչպես ժամանակին Անգլիան, Թուրքիային կվերադարձնի ռուսների կողմից գրավվածը»:³⁰ Այստեղ, ոչ առանց հիմքի շեշտադրվում է, որ մեծ տերությունների հակասությունները միշտ խանգարել են Հայկական հարցի լուծմանը, սակայն, մյուս կողմից, թուրքերը մնան դատողություններով փորձում էին արդարացնել իրենց խայտառակ պարտությունները Կովկասյան ռազմաճակատում: Այնուամենայնիվ, թերթի այս հրապարակումը խոր մտածելու տեղիք էր տալիս թե ռուսական կառավարությանը և թե հայ գործիչներին:

1915թ. սեպտեմբերի 5-ին «Русское Ведомости» թերթն իր էջերում տպագրեց Օգլինսկու «Հայաստանն առանց հայերի» հոդվածը, որտեղ հայ ժողովրդի ողբերգությունը ներկայացվում էր որպես Թուրքիայի կողմից ծրագրված պետական քաղաքականության արդյունք, որը թուրքերի համար ուներ ինչպես ռազմավարական, այնպես էլ տնտեսական նշանակություն:

1916թ. հունիսին «Речь» թերթում տպագրվեց «Թուրքական խոստովանությունները Հայաստանում կատարված զազանությունների մասին» հոդվածը, որը պարունակում էր գերմանացի լրագրողին Թալեաթի բացատրությունները՝ ջարդերի կապակցությամբ: Թուրքիայի ներքին գործերի նախարարը մեղադրում է դաշնակցությանը, որն, իբր, պետական հեղաշրջում էր նախապատրաստում Թուրքիայում: Թալեաթը նշում էր, որ ինքը հարցաքննել է որոշ ազդեցիկ հայերի, որոնք «չեն քաջքրել» այդ «ղավաճանական ծրագիրը»: Այս առիթով «Дель» թերթը իրավացիորեն նշում է, որ Թալեաթը լռում է, թե ինչ ճանապարհով է հայերից «կորզել» այդ «խոստովանությունը»:

Ռուսական մամուլի ակտիվ քննարկման առարկա էր դարձել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցը: 1915թ. օգոստոսին «Современный Мир» հանդեսում տպագրվեց Դավիթ Անանունի հոդվածը, որտեղ առաջ էր քաշվում Հայկական հարցի ավարտական փուլ մտնելու դրույթը, քանի որ Թուրքիան գտնվում էր պատերազմի մեջ, ինչը հնարավոր էր դարձնում այդ հարցը լուծել եվրոպական դիվանագիտության ջանքերով: Միևնույն ժամանակ իրավացիորեն նշվում էր, որ Օսմանյան կայսրության պահպանման դեպքում այդ մասին խոսելն ավելորդ է:³¹

1916թ. մարտի 15-ին «Коммерческий Телеграф» թերթի Էրզրումի թղթակիցը «Հայաստանի հետ առևտրի մասին» հոդվածում նշում էր, որ որպես ռազմական ավար տեղի բնակչության ունեցվածքի բռնագրավումը հօգուտ պետական զանձարանի շուտով կվերացվի Կովկասի փոխարքայի նախաձեռնությամբ, քանի որ այդ միջոցը համարվել է ամարդյունավետ: Հոդվածում կարևորվում էին նաև Արևմտյան Հայաստանի հաղորդակցու-

թյան ուղիների քարելավման և այնտեղ ռուսական ապրանքներ փոխադրելու խնդիրները:³²

1916թ. ապրիլին, չնայած այն հանգամանքին, որ ռուսական կառավարող շրջաններում այդ ժամանակ այլևս ընդունված չէր խոսել ինքնավարության մասին, հայտնվեցին նոր հոդվածներ Արևմտյան Հայաստանի ինքնավարության վերաբերյալ: Պրոֆեսոր Կոտլյարովսկին «Проблемы Восточной России» հանդեսում առաջ քաշեց Ռուսաստանի սահմանների անվտանգության համադրույթի գաղափարը. «Առաջավոր Ասիայում Ռուսաստանի առաջնահերթ խնդիրներն են ռուսական սահմանների այնպիսի փոփոխությունը, որը չսպառնա Կովկասի անվտանգությանը, ինչպես նաև ազատագրվի Արևմտյան Հայաստանը», - ասվում էր հոդվածում:³³ Նույն հիմնախնդրին անդրադարձավ «Нерошес» հանդեսի մեկնաբան Վ. Վոլգինը: Իր հոդվածում նա նշում էր, որ ելնելով Պետական Դումայում հնչող ելույթներից, խոսքը գնում է ոչ այնքան Արևմտյան Հայաստանի ինքնավարության, որքան ռուսական գործերի կողմից գրավված Ասիական Թուրքիայի տարածքների բռնակցման մասին: Մեկնաբանը նշում էր, որ բռնակցման ծրագիրը հաղվածում է ինքնավարության գաղափարներով տոգորված հայ գործիչներին: Ի ամփոփումն՝ Վոլգինը նշում էր Պետական Դումայի կարծիքը՝ ինչ ինքնավարության մասին կարող խոսք լինել, եթե այն հակասության մեջ է մտնում մեծ տերությունների ռազմավարական շահերի հետ:³⁴ Անշուշտ այս վերջին եզրակացությունը չի կարելի ճշմարիտ ու օբյեկտիվ համարել՝ հոդվածագիրը Պետական Դումայի սեփականությանը և մեծապետական գործիչների ելույթները չպետք է ներկայացնեն որպես ողջ խորհրդարանի մոտեցում, քանզի կաղետների ֆրակցիան, որը մեծամասնություն էր կազմում Դումայում, ի դեմս իր ղեկավար Միլյուկովի հետակորեն կանգնած էր Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու դիրքերում: Այդուհանդերձ, տվյալ հրապարակումը ցայտուն կերպով արտահայտում էր կառավարող շրջաններում ընթացող պայքարն այս հարցի շուրջ:

Ֆ. Միմրիսկին, շարունակելով այս թեման, «Кавказское Слово» թերթում տպագրված հոդվածում ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ հայաթափված Արևմտյան Հայաստանում հետևողականորեն ընթանում է մահմեդականացման գործընթաց, ինչը դրսևորվում է հայերի լքված բնակավայրերում մահմեդական տարրի բնակեցմամբ, որը հետագայում կրարդացնի թե արևմտահայերի և թե Ռուսաստանի վիճակը:³⁵

Արևմտյան Հայաստանում ռուսական գործի ռազմավարության գնահատականն է տալիս «Иркутская жэз» թերթը. «Հայաստանում թուրքերը հաղորդակցության ուղիներ գրեթե չունենին: Մեր գործերը ստիպված են գրավել ժայռեր, քարափներ, լեռնաշղթաներ: Բուն քաղաքները հաճախ գտնվում են բարձր սարերում: Հայաստանի գրավումը, սակայն, հանդիսանում է ներկա պատերազմի ամենափայլուն էջերից մեկը, և այն մեր բանակը պսակեց հավերժական փառքով: Մակայն մենք ոչ միայն նվաճեցինք Հայաստանը, այդպիսով նրան տալով իրական կյանքի ազատ հնարավորություն, մենք այստեղ կառուցեցինք հաղորդակցության ուղիներ, որոնք խաղաղ կյանքի պայմաններում Հայաստանը շուտ չէր տեսնի»:³⁶

«Русское слово» թերթի հատուկ թղթակից Լիտովցևը, լինելով Էջմիածնում, գրուցում է քաղաքի վրա հայ աշխարհիկ և հոգևոր գործիչների հետ հայերի պատերազմում մասնակցելու և Արևմտյան Հայաստանի ապագայի հիմնախնդիրների շուրջ: Այդ գրույցներից հետո Լիտովցևը եզրակաց-

մում է, որ հայ գործիչները միաբերան այն միտքն էին արտահայտում, որ արևմտահայերի ճակատագիրը սերտորեն կապված է Ռուսաստանի հետ, և որ հայ ժողովուրդն օգնություն է սպասում միայն Ռուսաստանից: Մինևույն ժամանակ հայ գործիչները պատրաստակամություն են հայտնում, ռուսական կանոնավոր բանակի շարքերը, բացի կամավորական ջոկատներից, համարել այնքան հայ մարտիկներով, որքան ռուսական իշխանությունները հարկ կհամարեն:³⁷

Թղթակցի հետ գրույցում եպիսկոպոս Բագրատն անդրադառնում է Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցին: Տեղյակ լինելով Պետրոգրադի որոշ հետադեմ պարբերականների միջոցով տարածված «հայկական անկախ պետություն ստեղծելու» քարոզչությանը, եպիսկոպոս Բագրատն ընդգծում է, որ անկախ պետություն ստեղծելու հավակնություն հայ ժողովուրդը բացարձակապես չունի, նրա միակ ցանկությունը՝ պատերազմի հաղթական ավարտից հետո Ռուսաստանի հովանու տակ Արևմտյան Հայաստանի ինքնավարությունն է:³⁸

Մամուլի էջերում բաց մամակների տեսքով հայ և ռուս գործիչների միջև ակտիվ քննարկում էր ընթանում նաև Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի շուրջ: Այսպես՝ կադետական կուսակցության առաջնորդ Միլյուկովը ռուսական «Речь» քերթում տպագրել էր մի հոդված, որտեղ փորձում էր լուծում տալ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցին: Այս հոդվածին նույն «Речь» քերթում բաց մամակով պատասխանում է Ա. Չոպանյանը: Ընդհանուր առմամբ համաձայնվելով Միլյուկովի հետ, նա ընդգծում է որոշ անընդունելի դրույթներ: Նա, մասնավորապես, նշում է. «Միլյուկովն առաջարկում է, որ Ռուսաստանը, զբաղվելով Տրապիզոնին սահմանակից երկու հայկական վիլայեթները, քավարարվելու է դրանով և սահմանափակվելու է՝ այնտեղ Ռուսաստանի հովանու տակ ստեղծելով ինքնավարությունը»:³⁹ Չոպանյանը նշում է, որ դա լավագույն լուծում չի լինի, քանզի այդ հարցի լավագույն լուծումը վեց վիլայեթներում ինքնավարության ստեղծումն է, հակառակ դեպքում մյուս չորս վիլայեթների հայությունը կհայտնվի վատթար վիճակում: Վերջում Չոպանյանը համաձայնվում է Միլյուկովի հետ այն հարցում, որ այդ պահին՝ 1915թ. դրությամբ, ժամանակը չէր ողջ ծավալով քարծրացնել այդ հարցը, այլ հարկավոր էր սպասել պատերազմի ավարտին: Չոպանյանի հոդվածի հետ «Речь»-ի նույն համարում տպագրված է նաև Միլյուկովի պատասխանը: Միլյուկովն արդարանում էր, որ ինքը հայկական միայն երկու վիլայեթներում ինքնավարության ստեղծումը լավագույն տարբերակը չի համարում և համաձայն է Չոպանյանի կարծիքի հետ: Միլյուկովը նշում է, որ ինքը խոսել է այն մասին, որ այդ տարածքից դուրս է մնալու Կիլիկիան, որը Չոպանյանն անտեսել է իր հոդվածում:⁴⁰ Վերջում Միլյուկովը նշում է, որ տարածայնությունը Չոպանյանի և իր միջև միայն «ինքնավարություն» և «հովանավորություն» հասկացությունների ստույգ ձևակերպումների մեջ է: Այս հարցը, քերես, ամենակարևորն էր, քանի որ այս հասկացությունների տակ, ըստ էության, որոշվում էր քե ինչ չափով, ինչ աստիճանի ինքնավարություն պետք է տրամադրվեր հայերին (եթե իհարկե տրամադրվեր):

Այս առիթով Պետրոգրադի «Вържевые ведомости» քերթի լրագրող Ա. Բերեզովսկին (գրական անունը՝ Տ.Օլգենին) իրավացիորեն գտնում էր, որ «Ռուսաստանը պետք է ուղղի իր անցյալի սխալները, և եթե այսօր էլ հայ դատը չլուծվի, նրան ապագայում սպառնում է մեծ վտանգ»:⁴¹

“Русское слово” թերթն իր համարներում անդրադարձել է նաև Վանի իրադարձություններին։ «Ռուսական պաշտոնական աղբյուրներից, - նշվում է թղթակցություններից մեկում, - մեր թղթակիցը ստացել է այն լուրերի հավաստումը, որ թուրքերը զինաթափել են հայերին և ստիպում են աշխատել Վանի վիլայեթից Պարսկաստան տանող ճանապարհի վրա»։⁴² Խոսքը հավանաբար Բեռլին-Բաղդադ ռազմավարական երկաթգծի մասին է, երբ գերմանացիները թուրքերին «խորհուրդ» էին տվել այդ տարածքներ փոխադրել տեղահանված հայերին և որպես էժան աշխատուժ օգտագործել նրանց երկաթգծի շինարարությունում։ Ինչ վերաբերում է Վանը հանձնելու խնդրին, ապա թերթը դա գնահատել է որպես մարտավարական մանյովր, իսկ քնակչության զաղթը դիտում է իբրև ժամանակավոր էվակուացիա։ Թերթը նշում է, որ գերմանացի և թուրք քարոզիչները օգտագործեցին Վանի հանձնման փաստը որպես իրենց քարոզչության կարևոր խաղաքար՝ համոզելու համար Պարսկաստանին, որ Ռուսաստանը մոտ է ջախջախման, քանի որ ընդունակ չէ պաշտպանելու անգամ Վանը, ուստի Պարսկաստանին առաջարկվում էր Ռուսաստանին հարված հասցնել հարավից։⁴³ Բարեբախտաբար Վանի վերագրավումը ձախողեց Պարսկաստանին իրենց կողմից պատերազմի մեջ ներքաշելու գերմանա-թուրքական ծրագիրը։

Արդեն 1916թ. վերջին “Южные края” թերթը, անդրադառնալով Գերմանիայի մեղսակցության խնդրին, նշում է, որ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող հայերի ջարդերը թուրքերն իրագործեցին Բեռլինի մանրամասն մշակած ծրագրով։ Գերմանացիները թուրքերին վստահեցին այդ ծրագրի իրագործումը, իրենց վերապահելով դրա իրագործման վերահսկողությունը։ Սակայն Բեռլինը չէր նախատեսել, որ թուրքերը ոչ միայն պարզապես կոչնչացնեին հայերին, այլև դա կանեն զազրելի մեթոդներով, և հայ ժողովրդի ողբերգությանն ականատես կդառնան չափազանց շատ վկաներ։ Թերթը նշում է, որ այս կապակցությամբ Ջեմալ փաշան պաշտոնապես հրամայել էր արգելել Բաղդադի երկաթգծի շինարարության վրա աշխատող ինժեներներին նկարահանել հայ տեղահանվածների քարավանները։

Վանի ազատագրման բարոյաքաղաքական գնահատականն է տալիս իր էջերում նաև “Заря” թերթը. «Վանեցիները մինչև մեր գործերի գալը կռվում էին աննկարագրելի արիությամբ։ Նման արիությամբ հայերը կռվում են այժմ Մուշում, Մասունում և Ջեյթունի բոլոր մասերում։ Վանի ազատագրումը հայերի համար ունի մեծ նշանակություն, քանի որ այն հանդիսանում է արևմտահայերի կարևոր կենտրոնը։ Վանը և, ընդհանրապես, ամբողջ Վասպուրականը նաև հին ու միջին դարերում կարևոր դեր են խաղացել Հայաստանի քաղաքական կյանքում։ Այժմ հայերի ցնծությունը լիովին հասկանալի է նրանց կրոնակից եղբայրների համար։ Բնական է, որ ժողովուրդը, որը կիսավայրենի իր տիրակալներից կռել է այդքան դժոխսյին տառապանքներ, ապրում է հիացմունքով և ուրախությամբ, վերջապես զանցելով երկար սպասված հովանավորությունը։ «Ռուս» բառը յուրաքանչյուր արևմտահայի համար դարձել է նվիրական բառ։ Մեծ է այժմ նրա ուրախությունը, երբ նա իր գլխավերևում տեսնում է «ռուսի» դրոշմը»։⁴⁴

“Речь” թերթի 1916թ. փետրվարի 13-ի համարում մեջբերվում է ռուսական քանակի հետախուզության կողմից ստացված տեղեկությունը, որտեղ ասված է. «Էրզրումի գրավումից հետո այդ շրջանում հայտնաբերվել են թուրքական գազանություններից տուժած բազմաթիվ հայեր, որոնք

անհասպաղ օգնության կարիք են զգում»։ Հոդվածագիրը եզրակացնում է, որ խոսքը Վանից ռուսական զորքերի նահանջից հետո հրաշքով փրկված հայ բնակչության բեկորների մասին է։

Անդրադառնալով հայկական ջարդերի հարցի քաղաքական կողմին, հոդվածագիրը նշում է, որ արդյունք չտվեցին Հոմի պապ Բենեդիկտոս XV-ի բազմաթիվ դիմումները սուլթանին, որտեղ խնդրվում էր վերջ տալ հայերի ջարդերին։ Միևնույն ժամանակ նշվում է, որ չեզոք երկրներում օրեցօր աճում է ցասումը Թուրքիայի դեմ, և ուժեղանում է կարեկցանքը դժբախտ հայ ժողովրդի հանդեպ, ինչը դրսևորվում է օգնության ամենակատիվ ձևերով։ Հոդվածում եզրակացվում է, որ իրական ուժից բացի ոչինչ չի կարող ազդել թուրքերի վրա, որոնց համար չկան որևէ բարոյական արգելքներ։ Հոդվածն ավարտվում է լորդ Ռոբերտ Մեսիլի արտահայտությամբ, որը հնչել է Անգլիայի լորդերի պալատում. «Հայերի համար լավագույն պաշտպանությունը կարող է լինել միայն Ամտամտի հաղթանակը»։⁴⁵ Հաշվի առնելով Ամտամտի տերությունների միջև ընթացող պայքարը ազդեցության ոլորտների համար, կարծում ենք, ճիշտ կլիներ հայերի պաշտպանությունը համարել Ռուսաստանի, և ոչ թե Ամտամտի հաղթանակը։

Ռուսական մամուլը կարևոր տեղ էր հատկացնում նաև հայկական համագումարի գործունեությանը, որը պետք է նախանշեր հայ գաղթականների օգնության կազմակերպման հետագա աշխատանքների ընթացքը։

“Новое время” թերթը 1916թ. մայիսի 11-ի համարում տպագրված «Հայկական համագումարը և նրա նշանակությունը» խորագրով հոդվածում հանգամանորեն անդրադարձ է կատարվում գաղթականներին օգնություն ցույց տալու գործով զբաղվող հայկական հասարակական կազմակերպությունների՝ Պետրոգրադում ընթացող համագումարի աշխատանքներին։ Թերթն իր հոդվածն ավարտում է հետևյալ մտքով. «Հայերի պետրոգրադյան համագումարի երեկվա քննարկումները ցույց տվեցին, որ հայ ժողովուրդն արժանի է մեր կարեկցանքին ոչ միայն իր կրած տառապանքների պատճառով, այլև ի հետևանք այն զգացմունքների, որոնք այդ ժողովուրդը դրսևորում է Հայաստանի ազատագրության համար պայքարող ռուսական զորքերի նկատմամբ։ Մենք ողջունում ենք կրոնակից ժողովրդի ներկայացուցիչներին և ցանկանում ենք ծանր պայմաններում և բարձր արժանապատվության զգացումով տարվող նրանց աշխատանքին հաջող և արդյունավետ ավարտ»։⁴⁶

Հայկական համագումարի խնդրին է անդրադառնում նաև “Вестник-восточных ведомостей” թերթը, որը գտնում է, որ արևմտահայությունը պատմականորեն ձգտում է դեպի Ռուսաստան, նրան է տվել իր ողջ ուժերը և նրա վրա է դրել ազատագրվելու իր միակ հույսը, ուստի արևմտահայերին օգնելը Ռուսաստանի պետական մարմինների և ռուս հասարակության պարտքն է։ Թերթը նշում է, որ հայկական կազմակերպությունների համագումարը, որը նվիրված է գաղթականներին օգնելու կարևորագույն հիմնահարցին, նշանակալից քայլ է, որը կարող է մեծ քափով խթանել նրանց օգնելու աշխատանքների հետագա ընթացքը։⁴⁷

“Презабовская краѣ” թերթը հայկական կազմակերպությունների համագումարի առնչությամբ քերտում է համագումարի փոխխոսնակ Հր. Չալխուշյանի հետևյալ արտահայտությունը. «Հայերը բոլոր հույսերը կապում են ռուս հասարակության և անկաշառ ռուսական մամուլի հետ»։ Թերթը վերլուծության է ենթարկում Չալխուշյանի այս արտահայտությունը։

նր և կատարում է հետևյալ ընդհանրացումը. «Անկասկած առաջադեմ ժուռ հատարակությունը և առաջադեմ ժուռական մամուլը պատրաստ են հայերի ցանկություններին ցույց տալ համակողմանի օժանդակություն, սակայն սխալ կլինե՞ր չափազանցնել այդ օգնության, որպես իրական քաղաքական ուժի, իրական նշանակությունը»:⁴⁸ Թերթն ակնարկում է, որ հայ գործիչները ժուռական հատարական կարծիքի վրա ազդելու հետ զուգահեռ պետք է աշխատեն ազդեցություն տարածել պետական մարմինների վրա և այդպիսով իրենց ցանկություններին հաղորդեն իրական քաղաքական ուժ: Այնուհետև թերթն ավելի է զարգացնում այս միտքը. «Միսլ է հիմնվել միայն հասարակական կարծիքի վրա. հայերը պետք է իրենց հույսը դնեն ավելի շատ սեփական քաղաքական և նյութական ուժերի վրա և անդադար ձգտեն հասնելու նվիրական նպատակին»:⁴⁹ Դժվար է չհամաձայնվել այդ տեսակետի հետ: Նկատենք սակայն, որ երբ Չալխուշյանը հայտնում է հիշյալ միտքը՝ ժուռական մամուլի մասին, նա, կարծում ենք, փորձում է հիշեցնել նաև այն մասին, որ Ռուսաստանում կա նաև «կաշառված» մամուլ, որը կատարում է իր պատվիրատուների հանձնարարությունը և տպագրում հակահայկական հրապարակումներ, որոնք կարող են անդրադառնալ նաև ժուռ հասարակական կարծիքի վրա:

Ասել կուզի՝ ժուռական մամուլի էջերում դիտարկվում էին Հայկական հարցի լուծման տարբեր մոտեցումներ: Կենտրոնական մամուլի էջերում արտացոլվում էին ժուռական քյուրուկրատիայի մոտեցումները Հայկական հարցի լուծման ուղիների վերաբերյալ, երբեմն ներկայացվում էին ընդդիմադիր և ազգային գործիչների մոտեցումները:

Ինչ վերաբերում է կովկասյան մամուլին, ապա պետք է արձանագրենք, որ հիմնականում տեղական մամուլը, ուշադիր հետևելով մայրաքաղաքային մամուլում ընթացող քննարկումներին, իր մոտեցումները համապատասխանեցնում էր մայրաքաղաքային մամուլի կողմնորոշումներին: Սակայն դրա հետ մեկտեղ, հաճախ նկատվում էր կովկասյան մամուլի և մայրաքաղաքային մամուլի մոտեցումների էական տարբերություն՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության և արևմտահայերի հետ կապված այլ հարցերի վերաբերյալ:

Հայկական թերթերից ժուռական հետադիմական մամուլի հրապարակումների դեմ հանդես էր գալիս «Հորիզոնը», որը քննադատում էր ժուռական իշխանությունների քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում, մասնավորապես, ժուռական զինվորական իշխանությունների կողմից քրդերին հովանավորելը:⁵⁰ «Հորիզոնի» այս հոդվածները դուր չէին գալիս զինվորական իշխանություններին, և նրանք խստացնում էին զրաքննության պայմանները: Առանց ռազմական զրաքննության մամուլում տպագրված նյութերը, կանոնադրության 31 և 36 հոդվածների համաձայն, տուգանվում էին 100-ից մինչև 1000 ռուբլի, իսկ Ռուսաստանի և նրա ռազմական ուժերի անվտանգության վերաբերյալ նյութերի տպագրությունը՝ 500-ից 10000 ռուբլի, կամ սպառնում ազատազրկում 2 ամսից մինչև 1 տարի ժամկետով. քացի դա, պարբերականի գործունեությունը կարող էր կասեցվել:⁵¹ Կանոնադրությամբ հստակեցված չէր, թե ո՞ր կարգի նյութերն են վտանգում Ռուսաստանի զինված ուժերին, ինչը կարող էր ռազմական զրաքննության կողմից չարաշահումների տեղիք տալ: Ի դեպ՝ զրաքննության հետապնդումների արդյունքում «Հորիզոն» թերթը ստիպված մամակ է հղում Պետական Դումայի պատգամավորներ Պապաջանովին և Կերեն-

սկում, նշելով, որ գրաքննիչներն, առանց լուրջ հիմնավորման, սեփական հայեցողությամբ արգելում են տպագրել հոդվածներ:

Ամփոփելով շարադրվածը, նշենք, որ ռուսական պարբերական մամուլում Հայոց ցեղասպանության մասին չկառ միանշանակ «հայանապատ» կամ «ոչ հայանապատ» կարծիք: Ծավալված՝ գերատեսչական պայքարը և տարբեր քաղաքական հոսանքների բախումներն իրենց արտացոլումն էին գտում մաև մամուլի էջերում, սակայն ռուսական հասարակության մեջ կային մվիրյալներ, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ քարենապատ հասարակական կարծիք ձևավորել հայերի հիմնահարցերի նկատմամբ և արդեն ռուսական դրական հասարակական կարծիքի միջոցով փորձ կատարվեց ազդել մաև Ռուսաստանի կառավարող շրջանների վրա՝ վերջ տալու համար մրա քաղաքական կուրսում եղած տատանումներին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Տե՛ս «Армянский вестник», 1916, 4 сентября, стр. 4.
- ² Хроника, «Биржевые Ведомости», 1915, 21 мая.
- ³ Армяне в Константинополе, «Кавказское Слово», 1915, 15 мая.
- ⁴ Տե՛ս Побег из Константинополя, «Русские Ведомости», 1916, 22 апреля.
- ⁵ Տե՛ս նույն տեղում:
- ⁶ «Армянский вестник», N 8, 1916.
- ⁷ Նույն տեղում:
- ⁸ «Петроградские ведомости», N 123, 1916
- ⁹ К событиям в Турецкой Армении, նույն տեղում, 1915, 5 мая.
- ¹⁰ «День», 6 сентября, 1915.
- ¹¹ «Армянский вестник», N 6, 1916.
- ¹² «Кавказское слово», N 2, 1915, 3 января.
- ¹³ «Кавказ», N 3, 1915, 4 января.
- ¹⁴ Նույն տեղում, N 176, 1915, 4 августа.
- ¹⁵ «Русское слово», N 174, 1915, 29 июля.
- ¹⁶ «Кавказ», N 184, 1915, 14 августа.
- ¹⁷ Նույն տեղում:
- ¹⁸ Об отношениях русских обществ к армянам, «Кавказское Слово», 1915, 5 февраля.
- ¹⁹ Россия и Кавказ, նույն տեղում, 1915, 17 февраля.
- ²⁰ Беженцы, «Каспий», 1915, 9 февраля.
- ²¹ Хропика, «Кавказское Слово», 1915, 23 декабря.
- ²² Беженцы, նույն տեղում, 1915, 29 декабря.
- ²³ «Закавказская Речь», N 277, 1915, стр. 1.
- ²⁴ Նույն տեղում:
- ²⁵ Նույն տեղում:
- ²⁶ Гаривджяни Б. Геноцид армян перед судом истории, стр. 33, Ер., 1995.
- ²⁷ К взятию Вана, «Кавказское Слово», 1915, 14 мая.
- ²⁸ Оглинский Н. Армения вез армян, «Русские Ведомости», 1915, 5 сентября.
- ²⁹ Менак В. Положение в Ване, «Кавказское Слово», 1915, 2 сентября.
- ³⁰ Год войны..., նույն տեղում, 1915, 18 октября.
- ³¹ Аванун Д. К армянскому вопросу в Турции, «Современный Мир», 1915, N 8, стр. 144.
- ³² Экономическое положение Армении в связи с экономическим положением Турции, «Армянский Вестник», 1916, 24 апреля, стр. 12-13.
- ³³ «Провлемы Великой России», N 1, апрель 1916.
- ³⁴ «Летопись», N 4, 1916.

- ³⁵ Симбирский Ф. Завоеванный край, "Кавказское Слово", 1915, 20 октября.
³⁶ "Иркутская жизнь", приложение, 1916, 13 ноября.
³⁷ "Русское слово", N 4, 1915, 6 января.
³⁸ Նույն տեղում:
³⁹ "Баку", N 51, 1915, стр. 1.
⁴⁰ Նույն տեղում:
⁴¹ ЦГАОР, Коллекция 8 СА (пост. 12), опись 3, Особый отдел, д. 168, л. 31.
⁴² "Русское слово", N 89, 1915, 19 апреля.
⁴³ Նույն տեղում, N 180, 1915, 5 августа.
⁴⁴ "Заря", N 21, 1915.
⁴⁵ "Речь", 1916, 13 февраля.
⁴⁶ "Армянский съезд и его значение", "Новое время", 1916, 11 мая.
⁴⁷ "Армянский вестник", N 17, 1916.
⁴⁸ Նույն տեղում:
⁴⁹ Նույն տեղում:
⁵⁰ ЦГВИА, Коллекция 9, (пост. 53), ф. 521, опись 5, д. 413, л. 164.
⁵¹ Նույն տեղում:

Резюме

Дискуссия вокруг Армянского вопроса в русской печати в годы геноцида армян (1915-1917гг.).

Армен Марукян

Одной из важнейших проблем в годы Геноцида армян являлось становление объективной информации русской общественности о трагедии армянского народа. Эту роль взяли на себя русскоязычные армянские периодические издания "Армянский вестник" и "Армяне и война".

Вопросами Геноцида армян, автономии Западной Армении, добровольческих дружин, хронологии армянских погромов, беженцев активно интересовались также русские периодические издания. Русская печать к этим вопросам относилась не однозначно. Часто на страницах русской печати появлялись противоречивые публикации.

В целом же, русская периодическая печать в годы Геноцида армян заняла проармянскую позицию и сыграла значительную роль для создания благоприятного общественного мнения в России в отношении армян и трагедии армянского народа.

Summary

The Discussion of the Armenian Question in the Russian Press during the Armenian Genocide (1915-1917).

Armen Maroukian

The presentation of objective information about Armenian Genocide to the Russian public was one of the most important problems in Armenian Genocide years. Armenian periodicals tried to decide this problem in Russia.

Russian periodicals also were interested in problems of Armenian Genocide, of Western Armenia's autonomy, of volunteer groups, of the Armenian massacres chronology, of refugee problems, etc.

The relation of Russian press to these problems were not simple. Often there were many antagonistic publications on pages Russian periodicals.

On the whole, Russian periodicals had proarmenian position and created positive public opinion in Russia to the Armenian people and Armenian tragedy in Armenian Genocide years.